AMCA

ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Մենք հասարակություն չենք ունենա, եթե ոչնչացնենք շրջակա միջավայրը»

Երևան, 2024

WWW.AMCA.AM

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅԻ ՊԱՀԱՊԱՆՄԱՆ «ԿԱՆԱՉ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

Սույն քաղաքականությունը առաջարկում է կայունության ապահովման միջոցների համակարգ (այսուհետ նաև՝ կայունության միջոցներ), որոնք կնվազեցնեն Կենտրոնի և նրա աշխատակիցների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

I. Սկզբնական պարտավորություն

1. Կենտրոնը պարտավորվում է վերանայել գործող էկոլոգիական քաղաքականությունն ու գործելակերպը և անհրաժեշտության դեպքում կիրառել սույն քաղաքականությամբ ներկայացված առաջարկությունները:

2. Որպես այլընտրանք Կենտրոնը կարող է նշանակել «Կանաչ դեսպաններ», որոնց դերը սույն Քաղաքականության առաջարկություններին համապատասխան քաղաքականության և լավագույն պրակտիկայի ձևավորմանը նպաստելն է: «Կանաչ դեսպաններ»-ը պարտավոր են տնօրինությանը պարբերաբար ներկայացնել հաշվետվություն՝ սույն քաղաքականության և լավագույն պարկատիկայի արդյունքների մասին:

II. Էկոլոգիապես մաքուր էներգիայի օգտագործում

1. Կենտրոնը պետք է հնարավոր բոլոր դեպքերում դիտարկի մաքուր կամ վերականգնվող աղբյուրների էներգիայի օգտագործման հնարավորությունը:

2. Կենտրոնը կձեռնարկի հնարավոր բոլոր միջոցները՝ օգտագործելու այնպիսի էներգամատակարարներ, որոնք խթանում են էներգիայի վերականգնվող ռեսուրսները և (կամ) խիստ հետևում են ESG[1] ստանդարտներին:

III. Էներգիայի սպառման ծավալների և էկոլգիական ազդեցության նվազեցում

1. Կենտրոնը պետք է ձեռնարկի միջոցներ, որպեսզի նվազեցնի էներգիայի սպառումը և բարձրացնի սարքերի և սարքավորումների էներգաարդյունավետությունը՝ դրանով նվազեցնելով դրանց էկոլոգիական ազդեցությունը: Էներգախնայողության միջոցառումները և բնապահպանական գործելակերպը ներառում են հետևյալը՝

1.1. որպես հիմնական էներգիայի աղբյուր մաքուր կամ վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը,

1.2. LED լամպերի օգատգործումը,

1.3. բնական լույսի աղբյուների օգտագործումը, երբ դա հնարավոր է,

1.4. բույսերի օգտագործում՝ օդի խոնավությունը նվազեցնելու և այն թթվածնով հարստացնելու նպատակով,

1.5. սենսորների և վայրկյանաչափերով լուսավորման համակարգերի ներդրում,

1.6. աշխատակիցների կողմից երկար ընդմիջումների ժամանակ համակարգիչների անջատում,

1.7. «խելացի» երկարացման լարերի օգտագործում՝ նվազեցնելու էներգիայի սպառումը այն պահերին, երբ էլեկտրական սարքավումները չեն օգտագործվում,

1.8. թափոնների վերամշակման համակարգի ներդրում,

1.9. թափոնների հեռացման համակարգի օգտագործում՝ սննդի թափոնների վերամշակման նպատակով,

1.10. օդափոխության և ջեռուցման էկոլոգիական համակարգերի օգտագործում,

1.11. էկոլոգիական մաքրող միջոցների օգտագործում,

1.12. խոհանոցում և զուգարաններում ջուր խնայող սարքավորումների օգտագործում,

1.13. ձեռքերի էլեկտրախնայող չորանոցների կամ սրբիչների օգտագործում խոհանոցում և զուգարաններում, և (կամ)

1.14. կրկնակի օգտագործման, նյութերի վերօգտագործման, վերամշակման, եթե դա հնարավոր է, և ջերմոցային գազերի արտանետման փոխհատուցման մշտական ձգտում:

2. Կետրոնը պետք է իր SS ստորաբաժանումների և ղեկավարման մարմինների հետ հետևի, որպեսզի՝

2.1. որտեղ հնարավոր և նպատակահարմար է բոլոր համակարգիչները, էկարնները, լուսավորությունը և այլ էլեկտրական սարքավորումները որոշակի ժամանակահատված չօգտագործվելուց հետո անջատվեն կամ միացվի սպասման ռեժիմը,

2.2. որտեղ հնարավոր և նպատակահարմար է կրճատվի էլեկտրոնային փոստով հաղորդակցության ածխածնային հետքը՝ նախօրոք սահմանելով չափանիշներ նվազեցնելու էլեկտրոնային նամակների շղթաների երկարությունը, սահմանափակելու էլեկտրոնային նամակներին ոչ էական կցումները, ուղարկելու չափերով ավելի փոքր PDF ձևաչափի ֆայլեր և այլն:

3. Եթե Կենտրոնը չի հանդիսանում գրասենյակի տարածքի սեփականատերը, պետք է տարածքի սեփականտիրոջ հետ համագործակցի՝ վերոնշյալ միջոցների ներդրման համար:

IV. **Անցում թվային տեխնոլոգիաներին**

1. Կենտրոնը պետք է նպաստի, որ լսումները կազմակերպվեն և անցկացվեն տեխնոլոգիաների կիրառմամբ, որպեսզի հնարավորինս կրճատվի թղթի օգտագործումը, ինչպես նաև գործուղումների և երես առ երես հանդիպումների քանակը: Որպես նշված միջոցի կիրառման գործիք, Կենտրոնը նախատեսում է՝

1.1. Արբիտրաժային կանոններում ներառված դրույթների համաձայն, խրախուսել, որպեսզի փաստաթղթերը ներկայացվեն էլեկետրոնային եղանակով,

1.2. առաջարկել արբիտրաժային վարույթի մասնակիցներին իրենց միջև հաղորդակցությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով,

1.3. հրաժարվել կողմերից պահանջել փաստաթղթերի պատճենները ներկայացնել թղթային կրիչի վրա,

1.4. ստեղծել ընդհանուր էլեկտրոնային հարթակ՝ փաստթղթերի փոխանակման և դրանց պահպանման համար,

1.5. արբիտր նշանակվելու դեպքում քննարկել այն հարցը, թե արդյոք արբիտրն ի վիճակի է կիրառել տեխնիկական միջոցներ՝ արբիտրաժային գործի քննությունն ավելի արդյունավետ իրականացնելու համար,

1.6. արբիտրաժային վարույթի մասնակիցներին գործի նյութերը տրամադրել էլեկտրոնային եղանակով և թղթային եղանակով նյութեր տրամադրել միայն, երբ դրանք ուղղակիորեն պահանջվել են,

1.7. Արբիտրաժային կանոններով հնարավորություն տալ արբիտրաժային վարույթի ընթացքում լայնորեն կիրառել տեխնիկական միջոցներ,

1.8. Արբիտրաժային կանոններով նախատեսել տրիբունալի իրավասությունը՝ որոշելու վկաների և փորձագետների հարցաքննության կարգը՝ այդ թվում նաև համապատասխան դեպքերում հեռավար հարցաքննության կարգ,

1.9. Արբիտրաժային կանոններով լսումների անցկացման կարգում նախատեսել նաև դրանք հեռավար անցկացնելու հնարավորություն:

2. Կենտրոնը պետք է տրամադրի լսումներն առցանց անցկացնելու տեխնիկական հնարավորություն: Մասնավորապես՝

2.1. աուդիո կամ վիդեո կոնֆերանսներ,

2.2. փաստաթղթերի էլեկտրոնային կապոցներ,

1.3. ապացույցների էլեկտրոնային եղանակով ներկայացում

1.4. սղագրողների ծառայությունների օգտագործում,

1.5. բանավոր թարգմանություն,

1.6. սարքավումներ (դյուրակիր համակարգիչներ, մոնիտորներ, անլար խոսափողներ, բարձրախոսներ, պրոեկտորներ, էկրաններ և այլն),

1.7. լսումներ անցկացնող մենեջերների ծառայություն, ինչպես նաև

1.8. թեսթավորում և խորհրդատվություն:

3. Կենտրոնը, արբիտրաժային գործի լսումները կազմակերպելիս, եթե հնարավոր է, պետք է փորձի ներգրավել այնպիսի մատակարարներ և կազմակերպություններ, ներառյալ սղագրողներ, թարգմանիչներ և այլն, ովքեր ավելի մոտ են գտնվում լսումների անցկացման վայրին՝ անհարկի ճամփորդություններից և ժամանակավոր կացավայրերում բնակվելու անհրաժեշտությունից խուսափելու համար:

V. **Թղթի տպագրության և օգտագործման ծավալների նվազեցում**

1. Կենտրոնը պետք է ուշադիր գնահատի թղթի տպագրության անհրաժեշտությունը և ջանքեր գործադրի, որպեսզի տպագրվի այն, ինչը խիստ անհրաժեշտ է: Միևնույն ժամանակ պետք է

հորդորել աշխատակիցներին կրճատել տպագրության ծավալը: Փաստաթղթերը պետք է տպվեն միայն այդպիսի պահանջի ուղղակի առկայության դեպքում:

2. Այն դեպքերում, երբ տպագրությունը համարվում է անհրաժեշտ, Կենտրոնը պետք է հնարավորինս նվազեցնի տպագրության էկոլոգիական ազդեցությունը՝

2.1.օգտագործելով էկոլոգիական տոներ և թանաք,

2.2. օգտագործելով վերամշակված թուղթ, որը չի պարունակում քլոր և (կամ) փայտ,

2.3. օգտագործելով էկոլոգիական տպիչներ (օրինակ՝ լուսադիոդային ուլտրամանուշակագույն տպագրություն),

2.4. տպագրված փաստաթղթերը և ուղեկցող նյութերը էկոլոգիական մեթոդներով վերամշակելով այն դեպքերում, երբ դա նպատակահարմար է,

2.5. դիտարկելով այն հարցը, թե արդյոք անհրաժեշտ է փաստաթղթի պատճենն ուղարկել արտերկիր փոստային ծառայության միջոցով, թե կարելի է օգտվել տեղի տպագրական կենտրոնների մատուցած ծառայություններից:

3. Կենտրոնը պետք է հանդիպումների մասնակիցներին հորդորի իրենց հետ բերել նոութբուքներ կամ պլանշետներ և դրանք օգտագործել փաստաթղթերի ուսումնասիրության և էլեկտրոնային նշումների իրականացման համար, ինչպես նաև տեղեկատվությունը ներկայացնել էկրանների/ պրոեկտորների միջոցով՝ փաստաթղթերը տպելու փոխարեն: Գրենական պիտույքները պետք է հատկացվեն ըստ պահանջի:

4. Կենտրոնը պետք է հորդորի աշխատակիցներին օգտագործել բիզնեսի զարգացման և մարքեթինգային թվայնացված նյութերն:

5. Կենտրոնն իրեն հանձնված գործերով գործավարությունն առավելապես պետք է իրականացնի էլեկտրոնային եղանակով:

6. Անահատական տպիչ սարքերի օգտագործումը Կենտրոնում չի խրախուսվում:

7. Կենտրոնում պետք է օգտագործվեն բազմաֆունկցիոնալ սարքեր տպելու, պատճենելու, սքանավորելու և ֆաքս ուղարկելու համար:

8. Կենտրոնը հնարավոր բոլոր դեպքերում դրամական միջոցների փոխանցումը կիրականացնի անկանխիկ եղանակով, որպեսզի նվազեցվի թղթային չեկերի և փոստով ուղարկումների անհրաժեշտությունը:

VI. **Խրախուսել վերամշակումը**

1. Կենտրոնը պետք է կիրառի թափոնների արտանետման՝ շրջակա միջավայրի համար բարենպաստ մեթոդներ, այդ թվում՝

1.1. գրասենյակի տարածքում տեղադրել հստակ առանձնացված թափոնների տարրաներ, ինչպես նաև վերամշակման մեթոդական ուղեցույցներ,

1.2. հրաժարվել աղբի տարրաներում և այլ նպատակներով պոլիէթիլենային տոպրակների օգտագործումից, եթե դրանք պատրաստված չեն վերամշակված նյութից, ինչպես նաև

1.3. պատշաճ վերամշակել մաշված ու փչացած կահույքը և էլեկտրական սարքավորումները:

2. Կենտրոնը պետք է գործի բոլոր փաստաթղթերը վերամշակի փաստաթղթերի պահպանման իր ներքին կանոններին համապատասխան՝ հաշվի առնելով առանձին գործերով գաղտնիության պահպանման տեղական նորմատիվային պահանջները:

VII. Մեկանգամյա օգտագործման առարկաների և պոլիէթիլենի օգտագործման սահմանափակում

1. Կենտրոնը պետք է հնարավորինս բացառի կամ սահմանափակի մեկանգամյա օգտագործման և(կամ) պլաստիկե առարկաների օգտագործումը, եթե դա հնարավոր է և անվտանգ: Միևնույն ժամանակ Կենտրոնը կարող է որպես ուղեցույց կիրառել ներքոհիշյալ սանդղակը, որտեղ նշված են բացառման կամ սահմանափակման ենթակա կետեր՝ առաջարկվող այլընտարանքներով այն դեպքերում, երբ այն հնարավոր է: Կենտրոնը նշված ցանկը պետք է տրամադրի իր գրասենյակի տարածքում գործող ճաշարաններին և ռեստորաններին, որպեսզի նվազեցվի թափոնների քանակը:

Նպատակը	Էկոլոգիական այլընտրանքը
Հրաժարում ջրի պլաստիկ շշերից	Ջրի բազմակի օգտագործման տարրաներ (օրինակ՝ ապակյա, մետաղյա կամ փայտյա)
Հրաժարում պլաստիկե ծողիկներից	Բազմակի օգտագործման ծողիկներ կամ հրաժարում ծողիկներից
Հրաժարում մետաղյա տարրաներով խմիչքներից	Սափորով մրգային հյութեր (կամ ջուր)
Հրաժարվել պլաստիկե մեկանգամյա օգտագործման սպասքից	Բազմակի օգտագործման սպասք
Հրաժարվել թղթյա բաժակներից և ափսեներից	Բազմակի օգտագործման բաժակներ և ափսեներ
Հրաժարվել մեկ բաժնի չափով փաթեթավորված մթերքներից	Ընդհանուր տարրա/ դիսպենսեր
Հրաժարվել սննդամթերքի համար նախատեսված պենոպլաստե և պլաստիկե տարրաներից	Սննդի մատուցում բազմակի օգտագործման տարրաներում կամ ստվարաթղթե տուփերում
Հրաժարվել թղթյա անձեռոցիկներից	Կտորե անձեռոցիկներ
Հրաժարվել մեկանգամյա օգտագործման թեյի և սուրճի պարկիկներից,	Թեյնիկ, սրճեփ
Հրաժարվել գովազդային գրքույկներից	

**Ցանկը սպառիչ չէ:*

VIII. Համագործակցություն «Կանաչ» կազմակերպությունների հետ

1. Կենտրոնը միջոցներ կձեռնարկի սննդի էկոլոգիապես անվտանգ մատակարարման մեթոդներ կիրառելու համար, մասնավորապես՝

1.1. օգտվել սննունդ մատակարարող այն ընկերությունների ծառայություններից, որոնք օգտագործում են մեկանգամյա փաթեթավորման այլընտրանք, ինչպես նաև տեղական մատակարարման աղբյուրներ,

1.2. նախապատվություն տալ էկոլոգիապես մաքուր և (կամ) բուսական ծագման սննդին և խմիչքին, որոնք չեն պարունակում սինթետիկ պեստիցիդներ կամ պարարտանյութեր,

1.3. օգտագործել էկո-բարեկամական գովազդային նյութեր՝ միաժամանակ հաշի առնելով վորանշյալ ցանկը մեկանգամյա օգտագործման առարկաների սահմանափակման և պլաստիկի օգտագործումից հարաժարվելու համար, ինչպես նաև

1.4. կրճատել սննդի թափոնների քանակը:

2. Կենտրոնը պետք է միջոցներ ձեռնարկի էկո-բարեկամական առաքման ծառայություններից օգտվելու համար՝ օգտագործելով այն արդյունավետ և ըստ անհրաժեշտության:

3. Կենտրոնը պետք է հորդորի իր SS ստորաբաժանումներին՝ տեխնոլոգիական լուծումների չափանիշների շարքում ներառել նաև նշված կայունության միջոցները:

4. Գործի լսումների ժամանակ, եթե հնարավոր է, ներագրավել այնպիսի մատակարարներ և կազմակերպություններ, ներառյել սղագրողներ, թարգմանիչներ և այլն, ովքեր ավելի մոտ են գտնվում լսումների անցկացման վայրին՝ անհարկի ճամփորդություններից և ժամանակավոր կացավայրերում բնակվելու անհարժեշտությունից խուսափելու համար:

IX. Պատասխանատու վերաբերմունք ճամփորդությունների նկատմամբ

1. Գործուղումների անհրաժեշտությունը նվազեցնելու նպատակով Կենտրոնը պետք է ապահովի՝

1.1. իր կողմից կազմակերպվող կոնֆերանսներին հեռավար մասնակցության հնարավորությունը,

1.2. հեռավար նիստեր անցկացնելու հնարավորությունը:

2. Կենտրոնը պետք է խրախուսի իր աշխատակիցներին՝ գնահատել ճամփորդությունների անհրաժեշտությունն այնտեղ, որտեղ կարող է հասանելի լինել այլընտրանքային լուծում՝ հիմնված տեխնոլոգիաների կիրառման վրա, օրինակ՝ աուդիո- կամ վիդեոկոնֆերանսներ կամ հեռախոս:

3. Կենտրոնը պետք է դիտարկի այնպիսի կանոններ ընդունելու հնարավորությունը, որոնք թույլ կտան աշխատակիցներին աշխատել տնից և, եթե տեղին է, խուսափել դեպի գրասենյակ կամ գրասենյակից տաքսիով կամ այլ ավտոմքենայով տեղաշարժվելուց: Դա կարող է ապահովվել տրանսպորտային միջոցը համատեղ օգտագործելը և ոտքով քայլելը, երբ դա հնարավոր է, խրախուսելով:

4. Կենտրոնը պետք է հորդորի իր աշխատակիցներին դիտարկել առցանց կոնֆերանսների և հանդիպումների անցկացման հնարավորությունը, եթե դա զգալիորեն կնվազեցնի գործուղումների քանակը:

5.Կենտրոնը պետք է մանրամասն գնահատի տարբեր միջոցառումների մասնակցելու համար գործուղումների անհրաժեշտությունը՝ հնարավորինս նվազեցնելով այդպիսի գործուղումների քանակը:

6. Եթե ամեն դեպքում գործուղումն անհրաժեշտ է, Կենտրոնը պետք է դիտարկի հետևյալ հնարավոր տարբերակները.

6.1. ընտրել կամ պատվիրակներին աջակցելու ընտրել ճամփորդելու այնպիսի տարբերակ, որի դեպքում տեղի է ունենում ածխածնի նվազագույն արտանետում,

6.2. եթե կա ավիաթռիչքի անհրաժեշտություն, պատվիրակներին հորդորել փոխհատուցել ավիաթռիչքի էկոլոգիական ազդեցությունը,

6.3. Գործուղումը առավելագույնս օգտագործել մի քանի նպատակների հասնելու համար՝ գործուղումների ընդհանուր քանակը նվազեցնելու նպատակով:

7. Միջոցառումների կազմակերպման կամ միջոցառումների մասնակցության դեպքերում Կենտրոնը պետք է ձեռնարկի միջոցներ՝ օգտագործելու տեխնոլոգիաներ գործուղումների անհրաժեշտությունը նվազեցնելու նպատակով՝ ապահովելով զեկուցողների և միջոցառման մասնակցիների հեռավար մասնակցությունը:

X. Սոցիալական պատասխանատվության խթանում

1. Կենտրոնը պետք է դիտարկի իր աշխատակիցներին տարեկան թույլատրելի ժամաքանակի տրամադրման հնարավորությունը՝ կայունության ապահովմանն ուղղված նախաձեռնություններ իրականացնող կազմակերպություններում կամավորական աշխատանք կատարելու համար՝ հաշվի առնելով նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը:

2. Կենտրոնը պետք է դիտարկի տարեկան գոնե մեկ միջոցառում կազմակերպելու հնարավորությունը՝ կայունության ապահովման միջոցների մասին իրազեկելու և դրանց իրագործմանը խթանելու նպատակով:

XI. Ստացած արդյունքների վերաբերյալ հաշվետվություն

Սույն Քաղաքականության դրույթներն իրականացնելիս Կենտրոնը պետք է դիտարկի թիրախների և ձեռքբերումների մասին հրապարակայնորեն զեկուցելու հնարավորությունը՝ առաջընթացին հետևելու, այլ հաստատությունների կողմից ևս կայունության միջոցներ ձեռնակելը խրախուսելու նպատակով: Հաշվետվությունը կարող է ներառել նաև տեղեկատվություն այն մասին, թե կայունության միջոցների իրականացման արդյունքում ինչքան խնայողություններ է ունեցել Կենտրոնը: